Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 9-ի N 1942-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1419-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) կարգի 3-րդ կետում «5 տարի» բառերը փոխարինել «5-7 տարի» բառերով.

2) կարգի 8-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 112-Ն որոշման 3-րդ կետում» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 265-Ն որոշման 3-րդ կետում» բառերով.

3) կարգի 8-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 265-Ն որոշման հավելվածում նշված՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության ենթակայության միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների մասով՝ «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 265-Ն որոշման հավելվածում նշված համապատասխան մարզի ենթակայության ճանապարհների մասով՝ մարզպետի որոշմամբ սահմանված պատասխանատու ստորաբաժանումը:».

4) կարգի 10-րդ կետում «ճանապարհի հիմնական նորոգումից» բառերը փոխարինել «ճանապարհի միջին, հիմնական նորոգումից» բառերով.

5) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-ին կետով.

«10.1. Պետական ավտոմոբիլային ճանապարհների միջին, հիմնական նորոգման կամ վերակառուցման ու ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման համար կարող է կնքվել մեկ պայմանագիր: Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման համար պայմանագրով կարող է սահմանվել գործոնային գին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման:».

6) կարգի 11-րդ կետի 4-րդ, 8-րդ և 12-րդ ենթակետերից հանել «Նշված վիճակում գտնվող ճանապարհահատվածները ենթակա են հիմնանորոգման կամ վերակառուցման և ենթակա չեն ընթացիկ ամառային պահպանման.» բառերը.

7) կարգի 13-րդ կետով նախատեսված ավտոմոբիլային ճանապարհների պահպանման նորմատիվ մակարդակների բնութագրերը ներկայացնող N 2 աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«

Թուլատրելի	1. Բավարարված են սույն կարգի N 3 աղյուսակում նշված պահանջները՝ ըստ կոնստրուկտիվ տարրերի: 2. Թույլատրվում է երթևեկության ժամանակավոր սահմանափակում (բացի տեխնածին կամ բնածին աղետների դեպքերից) ոչ ավելի, քան 8 օր:

».

8) կարգի 22-րդ կետով նախատեսված ավտոմոբիլային ճանապարհների պահպանման ցուցանիշներին առաջադրվող պահանջների N 3 աղյուսակի «Ընթացիկ ամառային պահպանում» աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) Ընթացիկ ամառային պահպանում

Ցուցանիշի ծածկագիրը	Ցուցանիշի անվանումը, թերության բովանդակությունը	Վիճակի գնահատականը	Պահպանման մակարդակը			
			լավ	միջին	բավարար	թույլատրելի
1	2	3	4	5	6	7
1. Հողային պաստառ և օտարման շերտ						
1.1.	Կողնակը բարձր է երթևեկելի մասի եզրից և (կամ) կողնակը ցածր է երթևեկելի մասի եզրից ավելի քան 5 սմ, և (կամ) կողնակը հարթեցված չէ և (կամ) կողնակին առկա է 10 սմ-ից բարձր խոտածածկույթ, և (կամ) առկա են երթևեկությանը խանգարող ճյուղեր, և (կամ) բաժանարար գոտում առկա են 25 սմ-ից բարձր խոտածածկույթ, և (կամ) տեսանելիությանը խանգարող 1.2 մ-ից բարձր թփեր (գծմ/կմ): Թերության վերացման ժամկետը 10 օր է:	երաշխիքային լավ բավարար վատ	չի թույլատրվում 50 - -	- 100 100 -	- - 150 -	- - - 150
1.2.	Չմաքրված կողային առուներ և (կամ) վաքեր (ջրի բերվածքներ, լանջերի թափվածքներ) (լցվածության տոկոս): Թերության վերացման ժամկետը 5 օր է:	երաշխիքային լավ բավարար վատ	10 20 - -	- 30 40 -	- - 50 -	- - - 50
1.3.	Աղբ և օտար առարկաներ՝ ճանապարհի օտարման շերտի սահմաններում, որոնք հանդիպում են հաճախ, քան (մ): Թերության վերացման ժամկետը 1 օր է:	երաշխիքային լավ բավարար վատ	300 300 - -	- 200 150 -	- - 100 -	- - - 100
2. Երթևեկելի մաս և մայթեր						

1	2	3	4	5	6	7
2.1.	Փոսեր՝ երթևեկելի մասի վրա ոչ ավելի (տոկոս ընդհանուր մակերեսից): Թերության վերացման ժամկետը 7 օր է:	երաշխիքային լավ բավարար վատ	չի թույլատրվում 0.2 - -	- 0.3 0.6 -	- - 0.7 -	- - - բավարար անցանելիություն և ավտոմոբիլային տրանսպորտի անխափան երթևեկություն ապահովող վիճակ
2.2.	Չմշակված ճաքեր (լայնական կամ երկայնական)՝ 3 մմ-ից ավելի լայնությամբ (գծմ/կմ): I տեխնիկական կարգի ավտոճանապարհների համար նշված ցուցանիշները կրկնապատվում են: Թերության վերացման ժամկետը 15 օր է:	երաշխիքային լավ բավարար վատ	չի թույլատրվում 100 - -	- 200 400 -	- - 500 -	-
2.3.	Կոպճածածկի անհարթություններ (աղուրներ, անձրևաջրի հոսքի հետքեր) 5 սմ-ից ոչ ավելի խորությամբ ոչ ավելի (տոկոս ընդհանուր մակերեսից): Թերության վերացման ժամկետը 7 օր է:	երաշխիքային լավ բավարար վատ	չի թույլատրվում 0.5 - -	- 0.8 1 -	- - 1.5 -	- - - բավարար անցանելիություն և ավտոմոբիլային տրանսպորտի անխափան երթևեկություն ապահովող վիճակ
3. Արհեստական կառուցվածքներ						
3.1.	Բերվածքների, տիղմի նստվածք որևէ խողովակում՝ ուղղանկյուն խողովակի աշխատող բարձրության, կլոր խողովակի տրամագծի մասերով:	երաշխիքային լավ բավարար վատ	չի թույլատրվում չի թույլատրվում - -	- 1/10 1/5 -	- - 1/4 -	- - - 1/4

1	2	3	4	5	6	7
	Թերության վերացման ժամկետը 5 օր է:					
3.2.	Որևէ խողովակի մուտքի և ելքի հուների լցվածք՝ գլխամասից 5 մ հեռավոր-ությամբ (հունի մակերեսի տոկոսը): Թերության վերացման ժամկետը 10 օր է:	երաշխիքային լավ բավարար վատ	չի թույլատրվում 5 - -	- 10 20 -	- - 30 -	- - - 30
3.3.	Որևէ կամրջի (ուղեանցի) երթևեկելի մասի ջրթող հարմարանքների, մայթերի տակ ջրթող անցքերի խցանում (ընդհանուր քանակի տոկոսը): Թերության վերացման ժամկետը 3 օր է:	երաշխիքային լավ բավարար վատ	չի թույլատրվում չի թույլատրվում - -	- 10 20 -	- - 25 -	- - - 25
3.4.	Թեքված, չներկված, կեղտոտ բազրիքներ և պաշտպանիչներ, ոչ ավելի (ընդհանուր երկարության տոկոսը): Թերության վերացման ժամկետը 5 օր է:	երաշխիքային լավ բավարար վատ	չի թույլատրվում 5 - -	- 10 10 -	- - 20 -	- - - 20
4. Կահավորանք						
4.1.	Թեքված, ծռված, վնասված ճանապարհային նշաններ, (ընդհանուր թվի տոկոսը): Թերության վերացման ժամկետը 5 օր է:	երաշխիքային լավ բավարար վատ	չի թույլատրվում չի թույլատրվում - -	- 10 20 -	- - 30 -	- - - 30
4.2.	Թեքված, ծռված, չներկ-ված, կախված կամ իջեց-ված հենարանով պաշտ-պանիչներ (պաշտպանիչի երկարության տոկոս): Թերության վերացման ժամկետը 5 օր է:	երաշխիքային լավ բավարար վատ	չի թույլատրվում չի թույլատրվում - -	- 10 20 -	- - 30 -	- - - 30
4.3.	Միջպետական նշանա-կության ավտոճանա-պարհներին բացակայող ճանապարհային նշաններ (պահանջվող ընդհանուր	երաշխիքային լավ բավարար	չի թույլատրվում 5 -	- 10 15	- - 20	- - -

1	2	3	4	5	6	7
	թվի տոկոսը):	վատ		-	-	20
4.4.	Թեքված, չներկված կարճայուներ (ընդհանուր թվի տոկոսը): Թերության վերացման ժամկետը 3 օր է:	երաշխիքային լավ բավարար վատ	չի թույլատրվում 10 - -	- 20 20 -	- - 30 -	- - - 30
4.5.	Բացակայող լուսանդրադարձիչներ պաշտպանիչների և կարճայուների վրա (պահանջվող ընդհանուր թվի տոկոսը): Թերության վերացման ժամկետը 3 օր է:	երաշխիքային լավ բավարար վատ	չի թույլատրվում 15 - -	- 20 20 -	- - 30 -	- - - 30

ա. երաշխիքային վիճակում գտնվող ճանապարհահատվածների համար չի կարող պահանջվել ընթացիկ ամառային պահպանման միջին, բավարար և թույլատրելի մակարդակներ: Լավ վիճակում գտնվող ճանապարհահատվածների համար չի կարող պահանջվել ընթացիկ ամառային պահպանման բավարար և թույլատրելի մակարդակներ: Բավարար վիճակում գտնվող ճանապարհահատվածների համար չի կարող պահանջվել ընթացիկ ամառային պահպանման լավ և թույլատրելի մակարդակներ,

բ. անբարենպաստ բնակլիմայական պայմաններից ելնելով՝ երթևեկելի մասի ընթացիկ ամառային պահպանումով նախատեսված աշխատանքների (փոսային նորոգում և ճաքերի մշակում) սկիզբը, ինչպես նաև դրանց դիմաց վճարումները տվյալ ավտոմոբիլային ճանապարհների պետական կառավարման մարմնի ղեկավարի համապատասխան հրամանով կարող են տեղափոխվել հաջորդ ամիս: Նշված դեպքում երթևեկելի մասի ընթացիկ ամառային պահպանման գնահատումը կիրականացվի տվյալ աշխատանքների իրականացումը սկսելու ամսից,

գ. թույլատրելի մակարդակը նախատեսում է կոպճային կամ խճային նյութերի կիրառմամբ կամ հարթեցման աշխատանքների միջոցով ապահովել ճանապարհի երթևեկելի մասի բավարար անցանելիությունը:».

9) կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված N 6 ձևի NN 6 և 6.1 աղյուսակները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« Ձև N 6

Աղյուսակ N 6

I տեխնիկական կարգի ճանապարհների սպասարկման արժեքի գնագոյացում (պահպանման ժամանակաշրջանը՝ գարուն-ամառ-աշուն)

Ավտոճանապարհի վիճակը (ծածկագիրը)	Տարվա կտրվածքով (դրամ)			
	լավ պահպանման մակարդակի դեպքում 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	միջին պահպանման մակարդակի դեպքում 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	բավարար պահպանման մակարդակի դեպքում 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	թույլատրելի պահպանման մակարդակի դեպքում 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)
Երաշխիքային ՄԵ				
Լավ ՄԼ				
Բավարար ՄԲ				
Վատ ՄՎ				

Աղյուսակ N 6.1

II-IV տեխնիկական կարգի ճանապարհների սպասարկման արժեքի գնագոյացում (պահպանման ժամանակաշրջանը՝ գարուն-ամառ-աշուն)

Ավտոճանապարհի վիճակը (ծածկագիրը)	Տարվա կտրվածքով (դրամ)			
	լավ պահպանման	միջին	բավարար	թույլատրելի

	մակարդակի դեպքում 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	պահպանման մակարդակի դեպքում 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	պահպանման մակարդակի դեպքում 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)	պահպանման մակարդակի դեպքում 1 կմ-ի պահպանման արժեքը (դրամ)
Երաշխիքային ՄԵ				
Լավ ՄԼ				
Բավարար ՄԲ				
Վատ ՄՎ				

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից: